



Շուշանիկ Կուրդինյան

Վարդենին և պարտիզանը

Մի քնքույշ ծիլ էր տնկել պարտիզայանը, ամբողջ ձմեռը պահել էր նրան հստակ ձյան տակ, հետո դուրս բերել, փաթաթել, որ չմրսի, իսկ այժմ, գարնանամուտին ամեն օր չոքում էր առաջը, ուղղում ոտքերի տակի հողը, թումբը, խնամում հա խնամում: Ծառ ու ծաղիկ նայում էին նրա վրա ու ծիծաղում . խենթացել է ծերունին:

Պապ, այ պապ, ո՞վ է այդ ծիլը, մի օր անհամբեր հարցրեք վարդենին:

Վարդենի է, աղջիկս, պատասխանեք ծերուկը, հեռու տեղի, տաք երկրի վարդենի . . .

Մի՞թե . . . Է՛հ, պապիկ, կեղծավորի մեկն ես եղել դու . հեռու տեղից եկածի համար, որ խելքդ կորցնես, վայ կգա քո պարտեզի գլխին:

Մի մեղանչիր, վարդենիս, եթե նրան ես հոգ չտանեն, կթառամի, քեզ ի՞նչ շահ, թող ծիլ, ծաղկի, ապրի, ասաց պարտիզայանը:

Կթառամի . հա՛, հա՛, հա՛ . ինչո՞ւ ես չթառամեցի:

Դու քո հայրենի հողումն ես, կարոտը չի մաշում քեզ, կարոտը չի կրծում սիրտդ, ասաց պարտիզայանն ու հեռացավ:

Կարոտը . . . , գարնացավ վարդենին ու բերանը բաց մնաց:

Ու՞ր ես նայում գարնացած, շնչաց խանդոտ սոխակը և սկսեց շուրջը դիտել:

Այ այն փոքրիկ ծիլին, որ չթռչնի կարոտից, ծիծաղեց վարդենին, դու կյանքումդ լսե՞լ էիր մի այսպիսի դատարկ բան:

Ես լսած չեմ, զգացել եմ, սիրելիս, դայլայլեց սիրահար թռչունը և կուրծքը դեմ տվեց վարդենու սուր և անսիրտ փշերին:

1903 թ .